***ՀԱՍՏԱՏՎԱԾ Է***

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
24.09.2014թ. թիվ 27/6-Լ որոշմամբ

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

_____

Կ.Տ.

Կազմված է 24.09.2014թ.

Տպագրված է 3 (երեք) օրինակից

Օրինակ թիվ 1 (մեկ)

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ

ք. Երևան, 2014թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ ՀՀ փաստաբանների պալատ)** Հյուսիսային ներկայացուցչությունը **(այսուհետ՝ Ներկայացուցչություն)** ստեղծվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի **(այսուհետ՝ Խորհուրդ)** 24.09.2014թ. թիվ 27/6-Լ որոշման համաձայն:

1.2. Ներկայացուցչությունը համարվում է ստեղծված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական հաշվառման պահից:

1.3. Ներկայացուցչությունը ՀՀ փաստաբանների պալատի առանձնացված ստորաբաժանումն է, որը կոչված է ներկայացնելու ՀՀ փաստաբանների պալատի շահերը, այդ թվում՝ իր իրավազորության տարածքում իրականացնելու ՀՀ փաստաբանների պալատի մարզային քաղաքականությունը և իրականացնելու դրանց պաշտպանությունը:

1.4. Ներկայացուցչության հիմնադիրն է ՀՀ փաստաբանների պալատը *(պետական գրանցման վկայական՝ 03 Ա 070122, գրանցման համար՝ 211.174.03619, գրանցման ամսաթիվ՝ 27.10.2005թ., իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զաքիյան 3)* **(այսուհետ նաև հիմնադիր)**:

1.5. Ներկայացուցչության անվանումն է՝

| | |
|---|---|
| հայերեն լրիվ՝ | ***Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչություն*** |
| հայերեն կրճատ՝ | ***ՀՀ փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչություն*** |
| ռուսերեն լրիվ՝ | ***Северное представительство Палаты адвокатов Республики Армения*** |
| ռուսերեն կրճատ՝ | ***Северное представительство Палаты адвокатов РА*** |
| անգլերեն լրիվ՝ | ***The North representative office of the Chamber of Advocates of the Republic of Armenia*** |
| անգլերեն կրճատ՝ | ***The North representative office of the Chamber of Advocates of the RA*** |

1.6. Ներկայացուցչությունը հիմնադրվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում **(այսուհետ՝ մարզեր)** փաստաբանների խնդիրների համակարգման և ՀՀ փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացման համար:

1.7. Ներկայացուցչության նստավայրն է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքը: Ներկայացուցչության գտնվելու վայրի և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վանաձոր, Մխիթար Գոշի փողոց, թիվ 2 տարածք:

1.8. Ներկայացուցչությունն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն և անգլերեն լեզուներով):

## 2. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. ՀՀ փաստաբանների պալատի կողմից ներկայացուցչության ստեղծումը նպատակ է հետապնդում՝

– համախմբել Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի վարչական տարածքներում գործունեություն ծավալող ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբաններին.

– վեր հանել նրանց մոտ փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում առաջացող խնդիրները և ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատին.

– ապահովել մարզերում ՀՀ փաստաբանների պալատի առջև դրված նպատակների և խնդիրների, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացումը:

2.2. Իր առջև դրված նպատակների և խնդիրների իրականացման ընթացքում Ներկայացուցչությունը պարտավոր է ղեկավարվել «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով **(այսուհետ՝ Օրենք)**, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի այլ իրավական ակտերի պահանջներով:

## 3. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

3.1. Ներկայացուցչության կառավարման մարմինը Ներկայացուցչության ղեկավարն է:

3.2. Ներկայացուցչության ղեկավարը նշանակվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից և գործում է վերջինիս կողմից տրված լիազորագրի հիման վրա:

3.3. Ներկայացուցչության ղեկավարը կարող է իր պարտականությունների կատարման համար վարձատրվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հաստատված հաստիքացուցակի համաձայն:

3.4. Ներկայացուցչության ղեկավարի հիմնական գործառույթը ՀՀ փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացման ապահովումն է՝ Օրենքին, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությանը և այլ ներքին իրավական ակտերին համապատասխան:

3.5. Իր իրավասության սահմաններում Ներկայացուցչության ղեկավարը՝

3.5.1. ապահովում է ՀՀ փաստաբանների պալատի և մարզերում գործող փաստաբանների միջև կապը.

3.5.2. կազմակերպում է հանդիպումներ մարզերում գործող փաստաբանների հետ՝ առնվազն եռամսյակը մեկ անգամ.

3.5.3. մարզերում գործող փաստաբանների առջև փաստաբանական գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրները, մտահոգությունները,

առաջարկությունները, ինչպես նաև դրանք լուծման հնարավոր տարբերակները գրավոր ներկայացնում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին.

3.5.4. մարզերում գործող փաստաբաններին իրազեկում է ՀՀ փաստաբանների պալատի (խորհրդի, նախագահի) կողմից ընդունված իրավական ակտերի, կազմակերպվող ուսումնական դասընթացների (սեմինարների, մասնագիտական ուսուցման, վերապատրաստման) և այլ միջոցառումների (այդ թվում՝ գործուղումներ, մարզամշակութային ծրագրեր և այլն) մասին.

3.5.5. ներկայացնում է առաջարկություններ ՀՀ փաստաբանների պալատի նախագահին և/կամ խորհրդին' մարզերում գործող փաստաբանների առջև իրենց փաստաբանական գործունեության ընթացքում ծառացած խնդիրների լուծման կապակցությամբ.

3.5.6. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տված լիազորությունների շրջանակում վերահսկողություն է իրականացնում մարզերում գործող հանրային պաշտպանների (այսուհետ՝ Հանրային պաշտպաններ) նկատմամբ.

3.5.7. Հանրային պաշտպանների թափուր տեղ լինելու դեպքում թեկնածությունների վերաբերյալ իր դիրքորոշումն է ներկայացնում.

3.5.8. ապահովում է մարզերի համակարգողների բնականոն աշխատանքը.

3.5.9. կատարում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ Օրենքին, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությանը և այլ ներքին իրավական ակտերին չհակասող այլ հանձնարարությունները.

3.5.10. կազմակերպում է Ներկայացուցչության գործունեությունը.

3.5.11. ներկայացնում է Ներկայացուցչության շահերը.

3.5.12. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին միջնորդում է մարզերի փաստաբանների նկատմամբ խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու համար.

3.5.13. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին միջնորդում է Ներկայացուցչության գործունեության համար անհրաժեշտ գույք տրամադրելու կամ անհրաժեշտ ծախսերի կատարումը թույլատրելու (այդ թվում՝ համապատասխան ֆինանսական միջոցները հատկացնելու) համար.

3.5.14. իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ, տալիս է պարտադիր կատարման ենթակա հրահանգներ և ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը,

3.5.15. իրականացնում է ՀՀ փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

3.6. Իր իրավասությանը հանձնված մարզերում առկա խնդիրները կամ հրատապ լուծում պահանջող այլ հարցերը ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին ներկայացնելու համար Ներկայացուցչության ղեկավարը կարող է գրավոր դիմում ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նախագահին՝ Ներկայացուցչության ղեկավարի առաջարկած օրակարգային հարցով (հարցերով) Խորհրդի նիստ հրավիրելու համար:

3.6.1. Ներկայացուցչության ղեկավարը պարտավոր է՝ մշտապես պահել կապը ՀՀ փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերով սահմանված

կարգով գործող մարզային համակարգողների և պատասխանատուների հետ, ինչպես նաև հսկողություն իրականացնել իր իրավասությանը հանձնված մարզերում համակարգողների և պատասխանատուների կողմից իրենց պարտականությունների և տրված հանձնարարությունների պատշաճ իրականացման նկատմամբ:

3.7. Ներկայացուցչության ղեկավարը ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ներկայացնում է եռամսյակային, կիսամյակային և ամփոփ տարեկան գրավոր հաշվետվություններ՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար: Հաշվետվությունների պարտադիր պայման է հանդիսանում հաշվետու ժամանակաշրջանում բացահայտված խնդիրների մասին տեղեկատվությունը և դրանց լուծման համար առաջարկների ներկայացումը: Հաշվետվությունները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասնհինգ օրվա ընթացքում: Ամփոփ տարեկան հաշվետվության մեջ ներկայացվում է նաև տվյալ տարվա կտրվածքով Ներկայացուցչության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

3.8. Ըստ անհրաժեշտության, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կամ խորհրդի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ Ներկայացուցչության ղեկավարը կարող է ներկայացնել լրացուցիչ գրավոր հաշվետվություններ, պարզաբանումներ կամ այլ փաստաթղթեր:

3.9. Ներկայացուցչության ղեկավարի լիազորությունները կարող են դադարեցվել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից՝

- Ներկայացուցչության ղեկավարի դիմումի համաձայն,
- աշխատանքային պայմանագրում նշված հիմքերով:

## 4. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

4.1. Ներկայացուցչությունը, որպես սեփականություն չունի առանձնացված գույք: Ներկայացուցչության գույքը տրամադրվում է ՀՀ փաստաբանների պալատի կողմից և հանդիսանում է վերջինիս գույքի անբաժանելի մասը:

4.2. Ներկայացուցչությանը տրամադրված ամբողջ գույքը, ներառյալ ֆինանսական միջոցները, հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի սեփականությունը և ենթակա է հաշվառման ՀՀ փաստաբանների պալատի հաշվեկշռում:

4.3. Ներկայացուցչության պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում ՀՀ փաստաբանների պալատը՝ որպես հիմնադիր:

4.4. ՀՀ փաստաբանների պալատի կողմից գույքը Ներկայացուցչությանը տրվում է օգտագործման իրավունքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5. Ներկայացուցչությունը պարտավոր է իրեն հանձնված գույքն օգտագործել բացառապես հիմնադրի կողմից նշված նպատակով և կարգով (եթե նման կարգ սահմանված է կապված գույքի առանձնահատկությունից):

4.6. Ներկայացուցչությունն իր գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորումը ստանում է ՀՀ փաստաբանների պալատից:

4.7. Ներկայացուցչության գործունեության համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են ՀՀ փաստաբանների պալատի բյուջեի միջոցներից՝ համապատասխան ֆինանսական և այլ փաստաթղթերի հիման վրա (ծախսի չափն ու անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթերի և ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական տնօրենի գրավոր եզրակացության առկայության դեպքում):

4.8. Ներկայացուցչության ղեկավարը Ներկայացուցչության գործունեության ընթացքում կատարած կամ անհրաժեշտ ծախսերի մասին ՀՀ փաստաբանների պալատին ներկայացնում է ֆինանսական բնույթի հաշվետվություններ, որտեղ պետք է արտացոլվեն համապատասխան ծախսի չափը, նպատակն ու անհրաժեշտությունը, ինչպես նաև դրանք հիմնավորող փաստաթղթերը:

## 5. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Ներկայացուցչության գործունեությունը կարող է դադարել այն պետական հաշվառումից հանելու կամ վերակազմակերպելու եղանակով:

5.2. Ներկայացուցչությունը կարող է պետական հաշվառումից հանվել կամ վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի որոշման հիման վրա:

5.3. Ներկայացուցչությունը կարող է հաշվառումից հանվել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

5.4. Ներկայացուցչության գործունեությունը համարվում է դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից:

## 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահի և/կամ խորհրդի իրավական ակտերով:

6.2. Ներկայացուցչության կանոնադրության մեջ փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ:

* * *